




Գծանկար 4. ՆՆՄԳ շրջապատող միջավայրը

ԱՎԵՏԻՔ ՆԱԶԱՐՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Մ.Զորանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի բեմատիկ խմբի ղեկավար, տ.գ.դ., պրոֆեսոր

ՏԱՐԱԾԱՋԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԶԱՐԳԱՅՄԱՆ ԲՆՈՒԹԱԳՐՈՒՄԸ, ՆԱԽԱՐԱՅԱԼՆԵՐՆ ՈՒ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ

Տարածաշրջանային միավորումների համակարգում գործում են մարզերը, համայնքները և կազմակերպությունները, որոնց զարգացումը պայմանավորվում է ֆինանսական միջոցների օգտագործմամբ, հաշվի առնելով տարածաշրջանի զարգացման անհավասարաչափության հաղթահարման (ՏԶԱՀ) նախադրյալների ապահովումը, քաղաքական և ֆիսկալ ապակենտրոնացման փոխկապակցությունը, ինչպես նաև այս երկու ուղիների համալիր օգտագործումը, որի բացակայությունը հանգեցնում է միավորների անհավասարաչափ զարգացման: Տարածաշրջանային միավորումների (ՏՄ) հավասարաչափ զարգացումը միայն կախված է սեփական միջոցների ծավալից և բյուջետային ֆինանսավորումից: Այդ առումով քննարկենք սեփական և բյուջետային միջոցների ապահովման պայմաններն ու առանձնահատկությունները: Տարածաշրջանային միավորումների զարգացման ֆինանսավորման մակարդակը որոշվում է դրանց բյուջեի ծավալով և դրա ծախսային մասով, ինչպես նաև ՀՆԱ-ի կազմում իրենց տեսակարար կշռով: Նշենք, որ համայնքների մեծ քանակության պատճառով, դրանց տեսակարար կշիռը այնքան փոքր է, որ դրա հիման վրա հնարավոր չէ որոշել բյուջետային միջոցների ծավալը, հատկացումները և ծախսերի մեծությունը: Այստեղից հետևում է, որ համայնքների խոշորացումը կարևորվում է ինչպես բյուջետային ֆինանսավորման, այնպես էլ սեփական միջոցների ստեղծման նախադրյալների հիմնավորման համար: Միջազգային փորձը ցույց է տալիս, որ ՏՄ-ի հավասարաչափ զարգացումը առաջին հերթին պայմանավորվում է սեփական ֆինանսական միջոցների ծավալով և աճով: Այդ առումով փորձենք ներկայացնել մարզերի, որպես ՏՄ-ն ֆինանսական սեփական միջոցների ստեղծման իրավիճակը, որը ձևավորվում է արդյունաբերական արտադրանքի թողարկման տարբեր պայմաններում:

Հետազոտությունները ցույց տվեցին, որ 2001-2005թթ. ընթացքում մույն արդյունաբերական արտադրանքը ավելացել է 2,1 անգամ, ընդ որում արտադրանքի աճի բարձր տեմպեր ունեցել են Սյունիքի, Արարատի, Գեղարքունիքի և Արագածոտնի մարզերը: Արդյունաբերական արտադրանքի կառուցվածքում Սյունիքի մարզի տեսակարար կշիռը 8,1%-ից հասել է մինչև 18,5%, Արարատի մարզինը՝ 5,1%-ից 7,1%, Գեղարքունիքինը՝ 1,7-ից 2,3% (աղ. 1.1, 1.2):

Միավորումների կամ մարզերի անհավասարաչափ զարգացումը արտահայտվում է նաև մարզերի արդյունաբերական սպառողական ապրանքների արտադրության աճի տեմպերով: Այս ցուցանիշը 2001-2005թթ. ՀՀ-ում կազմել է 166,0%, ընդ որում այս ավելի բարձր մակարդակի է հասել Արարատի մարզում՝ 259,4%, Կոտայքի մարզում՝ 208,9%, Արագածոտնում՝ 187,8% և Գեղարքունիքում՝ 180,3%:

Սպառողական ապրանքների ծավալում ամենաբարձր տեսակարար կշիռ են կազմում Արարատի, Կոտայքի, Լոռու և Արմավիրի մարզերը (աղ. 2):

Արդյունաբերական արտադրանքի ծախսը, ըստ մարզերի¹, մլն դրամ

	2001	2002	2003	2004	2005	աճը, %
Հայաստանի Հանրապետություն	309310.90	341065.4	426053.5	535263.7	651919.6	2.1 անգամ
Երևան ք.	152490.5	159718.9	209633.8	239126.0	307688.8	2402
Արագածոտն	3160.2	5002.2	7778.9	6323.9	7972.7	2402
Արարատ	15722.9	31305.3	38028.9	41783.8	46277.8	294
Արմավիր	21901.6	24231.2	20999.8	26792.5	28274.2	1,29
Գեղարքունիք	5267.8	8247.6	13255.3	19369.9	14835.4	2,82
Լոռի	15321.9	16579.6	18756.5	32246.3	36159.9	2,36
Կոտայք	55101.5	4929.2	57369.5	58293.9	67160.9	1,22
Շիրակ	9548.7	10825.3	11637.8	13000.2	13437.8	1,41
Սյունիք	25121.5	29402.5	41517.1	89245.9	120357.0	4,8 անգամ
Վայոց Ձոր	2882.4	3196.2	3496.6	4714.6	5059.3	1,75
Տավուշ	2791.9	3262.4	3579.3	4366.7	4695.8	1,68

Աղյուսակ 1.2


Արդյունաբերական արտադրանքի կառուցվածքը ըստ մարզերի

	2001	2002	2003	2004	2005
Հայաստանի Հանրապետություն	100	100	100	100	100
Երևան ք.	49.3	46.8	49.2	44.7	47.2
Արագածոտն	1.0	1.5	1.8	1.2	1.2
Արարատ	5.1	9.2	8.9	7.8	7.1
Արմավիր	7.1	7.1	4.9	5.0	4.3
Գեղարքունիք	1.7	2.4	3.1	3.6	2.3
Լոռի	5.0	4.9	4.4	6.0	5.5
Կոտայք	17.8	14.4	13.5	10.9	10.3
Շիրակ	3.1	3.2	2.7	2.4	2.1
Սյունիք	8.1	8.6	9.8	16.7	18.5
Վայոց Ձոր	0.9	0.9	0.8	0.9	0.8
Տավուշ	0.9	1.0	0.9	0.8	0.7

Աղյուսակ 2

Սպառողական ապրանքների արտադրության ծավալը, մլն դրամ

	2001	2002	2003	2004	2005	աճը, %
Հայաստանի Հանրապետություն	137224.3	149118.8	184026.6	212251.2	228310.9	166,4
Երևան ք.	80736.5	85571.1	109504.9	122078.0	128096.3	158,6
Արագածոտն	2326.0	2381.9	2729.3	3352.6	4368.0	187,8
Արարատ	11448.3	15174.1	21332.1	26377.	29702.2	259,4
Արմավիր	5066.1	4760.3	6339.7	8073.3	8801.0	173,7
Գեղարքունիք	3355.6	3196.7	3225.2	4639.0	6047.9	180,3
Լոռի	10643.4	10511.5	10701.3	10738.8	10503.7	98,7
Կոտայք	10629.1	14200.7	16257.5	20152.7	22207.6	208,9
Շիրակ	6115.3	6407.0	6723.7	7982.9	8661.2	141,6
Սյունիք	2590.0	2607.8	2515.4	3121.4	3646.2	140,8
Վայոց Ձոր	2595.2	2495.3	2865.6	3548.9	3800.1	148,4
Տավուշ	1718.8	1812.4	1831.9	2185.8	2476.7	144,1



■ Երևան	■ Արագածոտն	□ Արարատ	□ Արմավիր
■ Գեղարքունիք	■ Լոռի	■ Կոտայք	■ Շիրակ
■ Սյունիք	■ Վայոց Ձոր	□ Տավուշ	

Գծանկար 1. Սպառողական ապրանքների արտադրության բազային կառուցվածքը (2005)

¹ Այս և մյուս աղյուսակի տվյալները վերցվել են «ՀՀ վիճակագրական տեղագիր» և ինտերնետից:

Մարզերի՝ որպես տարածաշրջանային միավորումների, զարգացման անհավասարաչափությունն առաջանում է նաև ըստ արտադրության հատվածների արտադրանքի աճի տարբեր տեմպերի հետևանքով: Աղյուսակ 3-ում բերված ինդեքսները ցույց են տալիս զարգացման անհավասարաչափության հաղթահարման ուղիները: ՀՀ-ում Արտադրության հատվածների արտադրանքի ընդհանուր ինդեքսն ամբողջ արդյունաբերությունում 2004-2005թթ. 102,4-ից բարձրացել է մինչև 107,8: Այդ ցուցանիշը հանքարդյունաբերությունում 110.5-ից իջել է մինչև 95,4, մշակող արդյունաբերությունում 99,4-ից բարձրացել է մինչև 109,9, էլեկտրաէներգետիկայում՝ 109,9-ից մինչև 110,7: Եթե մարզերի հավասարաչափ զարգացումը գնահատենք հանքագործական և մշակող արդյունաբերության տեսանկյուններից, ապա հանքարդյունաբերությունում որպես գերակայելի մարզեր համարվում են՝ Արագածոտնում, Արարատի, Վայոց ձորի և Տավուշի մարզերը, իսկ հանքարդյունաբերության զարգացման նվազեցման մարզերը համարվում են Գեղարքունիքի, Լոռու, Սյունիքի, Ծիրակի մարզերը: Մշակող արդյունաբերությունում համեմատաբար հավասարաչափ զարգացման պայմաններ կարող են ապահովել Արարատի և Կոտայքի մարզերը (աղ. 3.1, 3.2.):

Աղյուսակ 3.1

Արդյունաբերական արտադրանքի ծավալը ըստ արտադրության հատվածների, մլն դրամ

	ամբողջ արդյունաբերություն		Հանքարդյունաբերական արդյունաբերություն		Մշակող արդյունաբերություն		Էլեկտրաէներգետիկայի, գազի, ջրի արտադրություն, բաշխում	
	2004	2005	2004	2005	2004	2005	2004	2005
Հայաստանի Հանրապետություն	535263.7	651919.6	97098.9	113328.0	336703.8	424361.7	101461.0	114229.9
Երևան ք.	239126.0	307688.8	1491.8	1898.2	200601.1	26935.6	37033.1	36255.0
Արագածոտն	6323.9	7972.7	42.1	84.5	5184.6	6604.0	1097.2	1284.2
Արարատ	41783.8	46277.8	103.1	122.6	37986.0	41476.6	3694.7	4678.6
Արմավիր	26792.	28274.2	39.5	0.8	9349.9	10582.7	17403.1	17690.7
Գեղարքունիք	19369.9	14835.4	11937.3	6123.0	5305.2	6128.5	2127.4	2583.9
Լոռի	32246.3	36159.9	1008.8	840.6	28594.3	32394.9	2643.2	2924.4
Կոտայք	58293.9	67160.9	1488.1	1092.8	29300.0	35522.3	27505.8	30545.8
Ծիրակ	13000.2	13437.8	457.3	273.1	9252.6	9846.8	3290.3	3317.9
Սյունիք	89245.9	120357.0	80452.5	102756.8	4026.1	4750.5	4767.3	12849.7
Վայոց ձոր	4714.6	5059.3	2.5	3.3	3571.6	3837.9	1140.5	12180.1
Տավուշ	4366.7	4695.8	75.9	132.3	3532.4	3681.9	758.4	881.6

Աղյուսակ 3.2

Մարզերի արդյունաբերական արտադրանքի ֆիզիկական ծավալի ինդեքսները, ըստ արտադրության հատվածների

	2004	2005	2004	2005	2004	2005	2004	2005
Հայաստանի Հանրապետություն	102.4	107.6	110.5	95.4	99.4	109.9	109.9	110.7
Երևան ք.	104.3	115.8	102.9	111.7	103.5	116.6	109.1	110.1
Արագածոտն	101.4	87.8	25.5	200.6	104.1	84.2	89.9	117.3
Արարատ	95.1	107.6	77.7	119.0	95.4	105.8	93.0	126.0
Արմավիր	121.1	114.5	95.7	2.0	116.1	103.7	124.1	122.5
Գեղարքունիք	159.1	95.2	195.0	82.7	126.1	100.7	115.7	123.3
Լոռի	115.7	97.2	3.6 անգամ	80.7	116.0	96.5	89.9	112.5
Կոտայք	90.8	107.4	50.7	66.6	88.1	106.8	110.4	112.5
Ծիրակ	96.6	97.0	111.8	72.1	97.5	93.9	92.6	110.8
Սյունիք	105.8	96.1	105.5	96.6	112.3	105.0	105.2	89.5
Վայոց ձոր	116.4	108.6	111.1	130.2	106.3	107.3	166.1	113.0
Տավուշ	110.6	98.4	73.6	172.2	113.7	93.9	102.6	113.9

Հետազոտությունները ցույց տվեցին, որ մարզերի հավասարաչափ զարգացումը կախված է նաև նրանից, թե յուրաքանչյուր մարզ կամ միավորում ինչ տեսակաբար կշիռ է կազմում հանքագործական և մշակող արդյունաբերություններում (աղ. 4):

Աղյուսակից երևում է, որ հանքագործական արդյունաբերությունում գերակայելի են համարվում Սյունիքի և Գեղարքունիքի մարզերը, որոնք կարող են ստեղծել հումքանյութային ռեսուրսներ՝ մյուս մարզերի համաչափ զարգացման համար: Մշակող արդյունաբերությունում գրեթե բոլոր մարզերն էլ պայմանավորվում են հումքանյութերի մշակման գործընթացներով, ընդ որում գերակայելի են համարվում Արարատի, Լոռու, Արագածոտնում և Տավուշի մարզերը:

Այսպիսով, մարզերի զարգացման վերլուծության և գնահատման արդյունքում պարզվեց, որ մարզերի դինամիկ զարգացման համար կարևորվում է դրանց զարգացման ուղղությունների հիմնավորումը և հանքագործական արդյունաբերությունում դրանց արդյունավետության և պահանջվող նոր ռեսուրսների ստեղծման

ապահովումը: Անշուշտ, մարզերի զարգացումը կախված է ոչ միայն սեփական ֆինանսական միջոցներից, այլև հարկաբյուջետային այն քաղաքականությունից, որը աջակցում է ՀՆԱ-ում ապահովել համայնքների բյուջեների և ծախսերի կիրառելի մեծություններ:

Աղյուսակ 4

Արդյունաբերական արտադրանքի կառուցվածքը ըստ արտադրության հատվածների, %

Մարզերը	Ամբողջ արդյունաբերական արտադրություն	Այդ թվում					
		Հանքագործական արդյունաբերություն		Մշակող արդյունաբերություն		Էլեկտրաէներգետիկայի, գազի, ջրի արտադրություն և բաշխում	
		2004	2005	2004	2005	2004	2005
Հայաստանի Հանրապետություն	100	18.1	17.4	62.9	65.1	19.0	17.5
Երևան ք.	100	0.6	0.6	83.9	87.6	15.5	11.8
Արագածոտն	100	0.7	1.1	82.0	82.8	17.3	16.1
Արարատ	100	0.3	0.3	90.9	89.6	8.8	10.1
Արմավիր	100	0.1	0.0	34.9	37.4	65.0	62.6
Գեղարքունիք	100	61.6	41.3	27.4	41.3	11.0	17.4
Լոռի	100	3.1	2.3	88.7	89.6	8.2	8.1
Կոտայք	100	2.5	1.6	50.3	52.9	47.2	45.5
Շիրակ	100	3.5	2.0	71.2	73.3	25.3	24.7
Սյունիք	100	90.2	85.4	4.5	3.9	5.3	10.7
Վայոց Ձոր	100	0.1	0.1	75.7	75.9	24.2	24.0
Տավուշ	100	1.7	2.8	80.9	78.4	17.4	18.8

Համայնքների բյուջեների ծախսերի և եկամուտների ՀՆԱ-ի մեջ ունեցած տեսակարար կշիռների ուսումնասիրությունից ակնհայտ է դառնում, որ դրանք 1999-ի համեմատությամբ մոտ երեք անգամ աճել են ՀՆԱ-ի մեջ ունեցած իրենց տեսակարար կշիռով: Սակայն այդ փաստն անգամ չի խոսում իրավիճակի բավարար մակարդակի մասին:

Պետական և տեղական բյուջեների ծախսերը համայնքի ծախսերում, ինչպես նաև տեղական բյուջեների ծախսերը ՀՆԱ-ի մեջ ըստ առանձին երկրների

Երկրներ	Պետական բյուջեի ծախսերը համայնքի ծախսերում (%)	Տեղական բյուջեների ծախսերը համայնքի ծախսերում (%)	Տեղական բյուջեների ծախսերը ՀՆԱ-ի մեջ (%)
Հայաստան (2002)	94,3	5,7	1,3
Լատվիա (1998)	74,8	25,2	9,4
Լիտվա (1997)	77,1	22,9	7,6
Լեհաստան (1998)	66,0	34,0	8,6
Չեխիա (1997)	83,4	16,6	6,8
Սլովակիա (1998)	92,7	7,3	4,1
Հունգարիա (1997)	74,5	25,5	12,0
Սլովենիա (1998)	90,8	9,2	4,9
Էստոնիա (1998)	69,4	30,6	11,9

Հայաստանը զգալիորեն ետ է մնում նշված երկրներից թե՛ ապակենտրոնացման, թե՛ լիազորությունների ֆինանսավորման առումով: Սակայն, եթե Հայաստանում տեղական բյուջեների տեսակարար կշիռը համայնքի ծախսերում կազմում է 5,7%, ապա Չեխիայում այն կազմում է 16,6%, դեռ 1998թ. ցուցանիշներով, որն աճի միտում ունի: Հետազոտությունները ցույց են տալիս, որ գրեթե ամեն տարի աճել են համայնքների կրթության ոլորտի ծախսերը, մույնը չենք կարող ասել նյութական արտադրության, մշակույթի, տեղեկատվության, ոլորտում արվող ծախսերի վերաբերյալ: Ընդհանուր առմամբ, ծախսերի փոփոխության գնահատումը պետք է տրվի ՀՆԱ-ի նկատմամբ: Ծախսերի առանձին ցուցանիշների և ՀՆԱ-ի համեմատությունը ցույց է տալիս, որ դրանք առանձին ծախսերի գծով կազմում են ՀՆԱ-ի երկու տոկոսը, իսկ ընդհանուր ծախսերը կազմում են ՀՆԱ-ի 3,3%-ը:

Համայնքների ծախսային մասի ձևավորման համար կարևոր նշանակություն ունի համայնքների բյուջեների պաշտոնական տրանսֆերտների (դոտացիաների և սուբվենցիաների) տրամադրումը:

Դոտացիաները տրամադրվում են համայնքների ֆինանսական համահարթեցման նպատակով:

Սուբվենցիաները կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումներ են, որոնք տրամադրվում են համայնքների ֆոնդային բյուջեներին: Համայնքներին սուբվենցիաների տեսակարար կշիռը պաշտոնական տրանսֆերտների մեջ կազմել է 0-3,7%:

Դոտացիաների փաստացի տեսակարար կշիռը համայնքների բյուջեների ընդհանուր եկամուտներում կազմում են 7,5-ից մինչև 50%:

Գործող ֆինանսական համահարթեցման մեխանիզմի համաձայն՝ դոտացիա են ստանում բոլոր համայնքները, սակայն դեռ մշակված չեն համայնքների դասակարգման չափանիշները և ստանդարտները և հիմնավորված չեն համաչափ զարգացման նախադրյալները:

Համայնքի համաչափ զարգացման ուղղության ընտրությունը պետք է բխի համայնքի կարողությունների գնահատականից և իրական մերդրումների պահանջարկից, բազմաթիվ համայնքների ֆինանսական պահանջարկը համայնքների կենտրոնական իշխանությանը ներկայացվում է ոչ մերդրումային նպատակներով, բացի դրանից գրեթե բացակայում են համայնքների առաջարկությունները կառավարության աջակցությամբ մերդրումային ծրագրերի իրականացման վերաբերյալ: Ներդրումային ծրագրերի իրականացման նպատակով պետությունը պետք է վարի համապատասխան քաղաքականություն, այն է, որ համայնքների զարգացման ծրագրերի համար պետական բյուջեից համայնքների բյուջեներին պետք է տրվի պաշտոնական տրամաֆերտներ (դոտացիաներ և սուբվենցիաներ):

Այսպիսով, կատարված ուսումնասիրության արդյունքում կարող ենք նշել այն, որ տարածաշրջանների միավորումների զարգացման կայացման հիմքերը պետք է փնտրել համայնքների արտադրության զարգացման արդյունավետ ծախսային քաղաքականության և հարկային դաշտի կարգավորման, ինչպես նաև բյուջետային հատկացումներից անկախանալու և ֆինանսական միջոցներ ձեռք բերելու խնդրի լուծման և համայնքային բյուջեների կառուցվածքային բարեփոխումների մեջ: Համայնքների համաչափ զարգացման համար հետաքրքիր է նաև համայնքների հարկային և ոչ հարկային եկամուտների համադրությունը ՀՆԱ-ի հետ: Այստեղ այդ իրավիճակը այնպիսին է, որ ոչ առանձին հարկատեսակների գծով և ոչ էլ ոչ հարկային եկամուտների գծով չունենք գոնե մեկ ցուցանիշ, որը կզերազանցի ՀՆԱ-ի 1 տոկոսի սահմանը: Այս փաստը խոսում է այն մասին, որ գոյություն ունի եկամուտների խիստ կենտրոնացվածություն:

Տարածքային զարգացման անցած ժամանակահատվածի վերլուծությունը ցույց է տալիս, որ տարածքային միավորումները համաչափ զարգացման միջոցառումներ իրականացնելու համար կարիք ունեն լրացուցիչ ֆինանսական միջոցների, որոնց համալրումը հիմնականում կարող է կատարվել սեփական հարկատեսակներից մի մասը տեղերին ուղղելու միջոցով: Նման մոտեցումն ակնհայտորեն պետք է ենթադրի նորմատիվային դաշտի կամ հարկման բազայի փոփոխություն, ինչպես նաև հանրապետական և տարածքային մակարդակների միջև հարկաբյուջետային հարաբերությունների ճշգրտում: Արդյունքում յուրաքանչյուր համայնքի համար հստակ կդառնա, թե ինչ չափանիշներով և ընթացակարգերով են կարգավորվում համայնքների բյուջեն և ծախսերը:

Համայնքային բյուջեի և ծախսերի իրականացման առումով առավել կարևորվում են սեփական ֆինանսական ռեսուրսները, քանի որ դրանց առկայությամբ են պայմանավորված թե՛ արտադրական ռեսուրսների կարողությունների գործարկման ամրապնդումը և թե՛ տեխնիկական միջոցների նորացումը: Համայնքի սեփական ֆինանսական ռեսուրսների ձևավորման նպատակը համայնքի բյուջեի եկամուտների կանխատեսումն է, ծախսերի կատարման հնարավորությունների բացահայտումը և հարկային եկամուտների ձևավորումը:

Հարկային եկամուտների ստացման համար չափազանց կարևոր է հարկային բազայի ճշգրտումը, հարկային եկամուտների նորմերի և համայնքների ծախսերի որոշումը:

Փորձենք վերլուծել նաև համայնքների ծախսերի տեսակարար կշիռը՝ ՀՆԱ-ում: Ուսումնասիրությունը փորձել ենք անցկացնել երկու հայեցակարգերի միջոցով: Դրանցից առաջինը ցույց է տալիս, որ 2007 թվականի դրությամբ համայնքների ծախսերի տեսակարար կշիռը ՀՆԱ-ի մեջ կմոտենա մոտավորապես 3.7-3.8 տոկոսի 2005-ի 3.3-ի փոխարեն: Ի տարբերություն առաջինի, երկրորդ հայեցակարգը ենթադրում է, որը թեկուզ գոյություն ունի ծախսերի տեսակարար կշռի աճի միտում, միևնույն է համայնքների ծախսերի տեսակարար կշիռը կկազմի ոչ ավել, քան ՀՆԱ-ի 3 տոկոսը: Դա պայմանավորված է հիմնականում նրանով, որ դիտարկվող ժամանակաշրջանի սկզբում համայնքների ծախսերը փոքր տեսակարար կշիռ են ունեցել ՀՆԱ-ի մեջ:

Նպատակահարմար ենք գտնում վերոհիշյալ բարեփոխումները ուսումնասիրել և վերլուծել պետական բյուջեի ծախսային մասում կանխատեսվող փոփոխությունների և համայնքների եկամուտների և ծախսերի կանխատեսվող ուղղությամբ:

2007-2009թթ. ՀՀ պետական բյուջեների կանխատեսվող մուտքերի վերլուծությունը ցույց է տվել, որ 2006 թվականի մակարդակի համեմատ, 2007թ. անվանական ՀՆԱ-ի շուրջ 9.2% աճի պայմաններում, 2007թ. թվականի պետական բյուջեի մուտքերի ծավալը ծրագրավորվում է շուրջ 8.7% կամ 41.8 մլրդ. դրամ ավելացումով (հիմնականում հարկային եկամուտների հավելածի հաշվին): Միաժամանակ 2007 թվականի մակարդակի համեմատ պետական բյուջեի մուտքերի ծավալի 12.4% աճ է կանխատեսվում 2008 թվականին (անվանական ՀՆԱ-ի 9.2% կանխատեսվող աճի պայմաններում) և 2008թ. մակարդակի համեմատ՝ 2009 թվականին՝ 2.9%-ով (անվանական ՀՆԱ-ի 8.7% կանխատեսվող աճի պայմաններում)¹:

Համայնքների ծախսերի ընդհանուր միտումն այն է, որ դիտարկվող գրեթե բոլոր ծախսային ուղղություններում երկրորդ հայեցակարգի միջոցով կատարված կանխատեսումները, իրենց աճի միտումներով դրական են, սակայն իրենց աճի տեմպերով ավելի փոքր են առաջին հայեցակարգի համեմատ, հետևապես համայնքների համար նպատակահարմար կլինի կանխատեսել ծախսային ցուցանիշները, այն էլ երկրորդ հայեցակարգի հիման վրա:

Այսպիսով, նշված հայեցակարգերի զարգացմամբ ընդհանուր եզրակացությունն այն է, որ հնարավոր է ձևավորել համայնքների ծախսերի արդյունավետ կառավարման հայեցակարգ, որը կարող է օգտագործվել եկամուտների և ծախսերի հիմնական ուղղությունների կանխատեսման համար: Այստեղ մեր կատարած ուսումնասիրության մեջ բացակայում էին տարբեր գործոնների ազդեցությամբ ծախսերի կամ եկամուտների աճի (նվազման) դեպքերը, որն, իհարկե, տեսականորեն հաշվի առնելը ևս բավականին բարդ է: Վերջնական արդյունքում ուսումնասիրության շրջանակները հանգում են մի կետի, որտեղից պետք է սկսվեն հաշվի առնվել յուրաքանչյուր համայնքի առանձնահատկությունները և հնարավորությունները, ինչպես նաև ըստ այդմ կատարվեն կանխատեսումները:

¹ «Հե 2007-2009թթ. պետական միջինժամկետը ծախսերի ծրագիրը հատուցելու մասին» ՀՀ կառավարության մասին:

Հայաստանի Հանրապետության տարածաշրջանային միավորումների բյուջեների ձևավորման և ծախսերի կառավարման ու դրանց արդյունավետության բարձրացման հիմնախնդիրների ուսումնասիրության արդյունքում հանգել ենք այն եզրակացությունների և առաջարկությունների, որոնց կենսագործումը, մեր կարծիքով, կարող է էապես նպաստել համայնքների բյուջեների ֆինանսական ապահովվածության մակարդակի բարձրացմանը, բյուջետային եկամուտների կանխատեսմանը և ծախսային ուղղությունների հիմնավորմանը: Այսպիսով, փորձը ցույց է տալիս, որ համայնքների բյուջեներում հայեցակարգերի ընտրությունը կապված է մի կողմից օրենսդրության պահանջների, մյուս կողմից համայնքների սեփական միջոցների ստեղծման կարողությունների առկայության հետ:

Բյուջետային միջոցների հատկացումները ենթադրում են համաչափ զարգացման բազմաթիվ գործողությունների իրականացում, որոնցից կարևորագույնը առավել արդիական, կատարելագործված և ներկա պահանջներին բավարարող բյուջետավարման ձևերի կիրառումն է: Այդպիսի ձևերից են ծրագրային բյուջետավորումը և ըստ աշխատանքների կատարման բյուջետավարումը, որոնք օգտագործվում են նաև տարածաշրջանային միավորների համաչափ զարգացման ֆինանսավորման դեպքում: Ծրագրային բյուջեն միջանկյալ օղակ է ծախսային և ըստ աշխատանքների կատարման բյուջեների միջև և ծառայում է տարածաշրջանների զարգացման կարգավորման համար: Ըստ աշխատանքների կատարման բյուջեի անցնելու համար անհրաժեշտություն է ծրագրային բյուջեի ներդրումն ու արժանատիությունը: Ինչպես ծրագրային, այնպես էլ ըստ աշխատանքների կատարման բյուջեի կայացման գործիքը բյուջետային ծրագիրն է: Եթե ծրագրային բյուջեի դեպքում հիմնական ուշադրությունը դարձվում է բյուջետային ծրագրի՝ որպես մեկ ամբողջության, իրականացմանը, ապա ըստ աշխատանքների կատարման բյուջեի դեպքում կարևորվում է այդ ծրագրով նախատեսված յուրաքանչյուր գործողություն և աշխատանք, ինչպես նաև ծրագրի ազդեցությունը տարածաշրջանների անհավասարության հաղթահարման վրա:

Այսպիսով, ըստ աշխատանքների կատարման բյուջետավարման ներդրման հաջողությունը մեծապես կախված է ծրագրային բյուջեի ընթացիկ ծախսերի արդյունավետությունից:

Ընթացիկ ծախսերի կազմը և կառուցվածքը, կապիտալ ծախսերի հետ մեկտեղ արտացոլում են համայնքի սոցիալ-տնտեսական վիճակը, համաչափ զարգացման ուղղությունների և հիմնախնդիրների լուծման ֆինանսավորման քաղաքականության բնույթը:

Քանի դեռ համայնքների բյուջեներում կապիտալ ծախսերը չեն կազմում ընդհանուր բյուջեի 70-75%, չի կարելի սպասել համայնքների համաչափ զարգացում:

ՍՏԵՓԱՆ ՊԱՊԻՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Մ.Զորանյանի անվան Տնտեսագիտության
ինստիտուտի առաջատար գիտաշխատող, տեխ.գ.թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷՆԵՐԳԱՀԱՄԱԿԱՐԳԻ ՍԱՀՄԱՆԱԿԻՑ ԵՐԿՐՆԵՐԻ ՀԵՏ ԻՆՏԵՐՄԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԴԻՄՆԱՎԱՐՑՆԵՐ

Հայաստանի, Վրաստանի, Ադրբեջանի էներգահամակարգերը ձևավորվել են որպես Անդրկովկասի էներգահամակարգի մի մաս: Անդրկովկասի էներգահամակարգն իր հերթին մտել է ԽՍՀՄ-ի եվրոպական մասի միացյալ էներգահամակարգի մեջ: Խորհրդային Միության փլուզումից հետո երկար տարիներ ձևավորված կապերը խզվեցին: Հայաստանի շրջափակման հետևանքով երկիրն ընկավ ծանր էներգետիկական ճգնաժամի մեջ:

Անհրաժեշտ է նշել, որ Անդրկովկասի երեք հանրապետությունների էներգահամակարգերը սկսեցին աշխատել զուգահեռ միայն 1960թ., երբ շահագործման հանձնվեց 330 կՎ բարձր լարման էլեկտրահաղորդման գիծը:

Հայաստանի էներգահամակարգի համար հատկապես ծանր էր 1991թ.-ից մինչև 1996թ.-ը: Ջերմային էլեկտրակայանները վառելիք չունեին աշխատելու համար: Էներգառեսուրսների խիստ պակասի պայմաններում կիրառվեցին սպառողների անջատումներ և սահմանափակումներ:

1992թ. 330 կՎ էլեկտրահաղորդման գիծն անջատվել է, և Հայաստանի էներգահամակարգն աշխատել է առանձին: Անդրկովկասի միացյալ կարգավարական ղեկավարումը չգործեց: Հայաստանի էներգահամակարգն այս վիճակում մնաց մինչև 1997 թվականը, երբ միացվեց 220 կՎ էլեկտրահաղորդման գիծը («Մեղրի»): Այն միացրեց Հայաստանի և Իրանի էներգահամակարգերը:

Անհրաժեշտ է նշել, որ 1991թ.-ից մինչև 1996թ.-ը Հայաստանի էներգահամակարգն աշխատել է խիստ դժվար պայմաններում: Շրջափակման հետևանքով հանրապետությունը չի ստացել մագուր, իսկ գազային վառելիքը եղել է սահմանափակ քանակությամբ, քանի որ մայրուղային գազամուղը հաճախ չի գործել: 1996թ. փետրվար ամսին կանգնեցվել է Վանաձորի ՋԷԿ-ը:

Էներգառեսուրսների քիչ լինելու հետևանքով ստիպված սպառողների նկատմամբ կիրառվեցին սահմանափակումներ և անջատումներ հովհարային գրաֆիկով: Այդ տարիներին Սևանա լճից էլեկտրական էներգիա արտադրելու համար բաց թողնվեց ավելի շատ ջուր: Արդյունքն եղավ այն, որ նախորդ տարիների համեմատ բոլոր հիդրոէլեկտրակայանները միասին արտադրեցին երկու անգամ շատ էլեկտրական էներգիա: Հզորության պակասի պայմաններում էներգահամակարգն աշխատեց ցածր հաճախականություններով՝ 43.5 Հց-ից մինչև 48 Հց: